

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԲՊՆՋՏՊԿ- Ջ-ԳՀԱՊՁԲ-18/5
ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով դիզելային յուղերի ձեռքբերման
գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան

23 փետրվարի 2018թ.
Ժամը. 15:00

Մասնակցում էին.

- Հանձնաժողովի նախագահ՝ **Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
- Անդամներ՝ **Ա. Զալադյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
- Մ. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
- Ն. Համբարձումյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
- Բ. Եղիզարյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
- Հանձնաժողովի քարտուղար **Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Հայտերի բացման մասին

«ՀՀԷԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով դիզելային յուղերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք. Երևան Վարդանանց փակուղի 8, 6-րդ հարկ հասցեում, ժամը 15:00-ին:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց զողանյութերի գնման հայտով նախատեսված նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված՝

Զ/հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
1	Դիզելային յուղեր	480000 (չորս հարյուր ութսուն հազար)

Հայտերի բացումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված կարգով:

1.1. Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը

«ՀՀԷԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումը
1	«Մոսէսքո» ՍՊԸ
2	«Ինգլիշ Թրեյդ Հաուզ» ՍՊԸ
3	«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ
4	«Հոյս Մոտոր » ՍՊԸ

1.2 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

Մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է կողմ-5 դեմ-0

1.3 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

«Մոսէսքո» ՍՊԸ-ի, «Ինգլիշ Թրեյդ Հաուզ» ՍՊԸ-ի, «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ և «Հույս Մոտոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է կողմ-5 դեմ-0

1.4 Մասնակիցների առաջարկած գինը

(ՀՀ դրամ)

Հ/Հ	Մասնակիցների անունները	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ
1	«Մոսէսքո» ՍՊԸ	386666,67	464000
2	«Ինգլիշ Թրեյդ Հաուզ» ՍՊԸ	526667	632000
3	«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ	499667	599600
5	«Հույս Մոտոր » ՍՊԸ	393334	472000

1.5 Հայտերի գնահատման մասին:

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց մասնակիցների փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքում՝ «Ինգլիշ Թրեյդ Հաուզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում, մասնավորապես գնային առաջարկում և մասնակցության հայտի ապահովման վճարման հանձնարարագրում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանություններ՝

- Գնային առաջարկում բացակայում է տառերով գրվածը
- մասնակցության հայտի ապահովման վճարման հանձնարարագրում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

«Մոսէսքո» ՍՊԸ, «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ և «Հույս Մոտոր» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

«Ինգլիշ Թրեյդ Հաուզ» ՍՊ ՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով: «Մոսէսքո» ՍՊԸ, «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ և «Հույս Մոտոր» ՍՊ ընկերությունների հայտերը գնահատել բավարար:

Գնահատումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված կարգով:

Ընդունվել է կողմ-5 դեմ-0

1.6 Բանակցությունների վարման մասին:

Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է կողմ-5 դեմ-0

1.7 Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Մոսէսքո» ՍՊԸ-ին

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Հույս Մոտոր» ՍՊԸ-ին

3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ին

Ընդունվել է կողմ-5 դեմ-0

1.8 «ՀՀԷԲԴՆՋՏԴԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է կողմ-5 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝


1. Հրավերով սահմանված կարգով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջել հայտով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:
2. Հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:
3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման վերաբերյալ եզրակացության ստացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Անդամներ՝

Հանձնաժողովի քարտուղար



Ս. Մելքոնյան

Ա. Զալադյան

Մ. Մելքոնյան

Ն. Համբարձումյան

Բ. Եղիզարյան

Ն. Նիկոլայան